ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

16 ՄԱՅԻՍԻ 2025թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 9 անդամներ:

Բացակա էին՝ Վաչե Խաչատրյանը, Արմենուհի Ծատուրյանը, Արթուր Կարապետյանը, Գնել Ղազարյանը, Սեվակ Սամվելյանը, Նարինե Սմբատյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Հուսիկ Սահակյանը

Նիստը արձանագրում էր ՝ Գևորգ Սիմոնյանը

ԼՍԵՑԻՆ

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 16-Ը ՄԱՅԻՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 6 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Արենի համայնքի ավագանու 16-ը մայիսի 2025 թվականի թիվ 6 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. Արենի համայնքի ավագանու 16-ը մայիսի 2025 թվականի թիվ 6 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Արենիի համայնքապետարանի և ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի համագործակցությամբ իրականացվող «Դիմակայություն ի սկզբանե» ծրագրի շրջանակներում ՄԱԿ-ի զարգացման ծրագրին 24.000.000 ՀՀ դրամ գումար փոխանցելուն համաձայնություն տալու մասին

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 064-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԵՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ և ՄԱԿ-Ի ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ Ի ՍԿԶԲԱՆԵ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՄԱԿ-Ի ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՈՐՊԵՍ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ 24.000.000 ՀՀ ԴՐԱՄ ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԳԵՎՈՐԳ ՍԻՄՈՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Տալ համաձայնություն Արենիի համայնքապետարանի և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի համագործակցությամբ իրականացվող «Դիմակայություն ի սկզբանե» ծրագրի շրջանակներում Արենի համայնքի կարիքների համար շարժական բեմ-բեռնատարի ձեռքբերման նպատակով ՄԱԿ-ի զարգացման ծրագրին որպես համաֆինանսավորում 24.000.000 ՀՀ դրամ փոխանցելուն:

2. Նշված գումարի փոխանցման հետ կապված բոլոր գործարքները ավարտին հասցնել մինչև ս/թ հունիսի 6-ը:

3. Առաջարկել Արենի համայնքի ղեկավարին ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հետ կնքել «Դիմակայություն ի սկզբանե» ծրագրի համաֆինանսավորման համաձայնագիր:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 065-Ա)*

Ավագանու անդամներ

ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՄՀԵՐ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

ՋԱՆԻԿ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

ՄՀԵՐ ԱՍԱՏՐՅԱՆ

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԽԱՉԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԳՐԻՇԱ ՂԱՋԱՐՅԱՆ

ՆԵԿՏԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՎԱՐԴՈՒՀԻ ՄԻՐԶՈՅԱՆ

Համայնքի ղեկավար

ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Գևորգ Սիմոնյանը _____